ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 248

հերթական համարը

Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Կոտայք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը	Փոփոխությունից հետո հարկայնությունը/ հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը)
ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնք (Կոտայք բնակավայրը) 07-038-0113-0059 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	07-038-0113-0059 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր	Համաձայն Կոտայք-8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «12» «հունիսի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):

4. Ակունք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Կոտայք բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Կոտայք բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: